

մարանին ներկայացուցած էր. և այն գրուածն եղաւ պատճառ որ վերը ըսած՝ երկու հռչակաւոր ուսումնականները իրենց ուշադրութիւնը անոր տուին:

Քիչ ժամանակի մէջ Լիպիկ կիսսէնի համալսարանին բնալուծական գործաւ նոցը նորոգեց, անանկ որ այս քաղաքը բնալուծական ճեմարանաց մայրաքաղաքն եղաւ, ուր գրեթէ ամեն տեղերէ, մինչև նաև Ատլանտեանին անդիէն ալ ուսանողք կը վազէին:

Քիչ ատենուան մէջ Լիպիկին համբաւը աշխարհածանօթ եղաւ. աւագ դուքսը իրեն շնորհեց պարոն տիտղոսը ժառանգական պատուով. Այտէլպէրկի համալսարանին կմելին ուսուցչապետը մեռնելով՝ զինքը հրաւիրեցին որ տեղը յաջորդէ, այլ յանձն չառաւ: Սակայն կիսսէն Լիպիկին գործունէութեանը ամենանձուկ տեղի մը եղաւ: Անոր համար՝ Պաւլիէրայի Մաքսիմիանոս թագաւորին հրաւիրելովը, 1852ին կիսսէն թողլով Մոնաքոյ փոխուեցաւ, ուր մեծ բնալուծական գործարան մը յանձնուեցաւ իրեն: Հոն իր դասախօսութիւններովը ժողովրդեան շատ սիրելի եղաւ, և թագաւորը՝ որ ամենայն կերպով զինքը կը պատուէր ու հետը ընտանեբար կը վարուէր, 1853ին նախագահ անուանեց Մաքսիմիանոսի՝ գիտութեանց և արուեստից ասպետական ժողովոյն: 1860ին գիտութեանց ճեմարանին նախագահ անուանեցաւ և տէրութեան ուսումնական ընկերութեանց ընդհանուր խնամակալ:

Յուստոս Լիպիկ անդադար հետամուտ եղաւ գործարանաւոր բնալուծութեան շահովը՝ օր օրուան վրայ նոր լոյս ծագելու տնկական և կենդանական բնախօսութեան վրայ, ինչպէս նաև տեսական և գործնական երկրագործութեան վրայ: Այլ անոր՝ երկրագործութեան, ճարտարութեան, մարդու ամենակարևոր արուեստից և ընհանուր մարդկութեան՝ գիտութեան միջոցաւ բաժան հոգի և կերպ կերպ ծառայութիւնները յիշելով՝ մեծ հատորներու պէտք են: Անոր համար այս համառօտ

տեղեկութիւնը ասով կ'ուզենք լմնցընել թէ Յուստոս Լիպիկ նոր և հաստատուն հիմունք ձգեց մշակական բնալուծութեան և բնախօսական բնալուծութեան անկործանելի շինուածոյն:

ՀԻՆԳ ՇԱԲԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԷՁ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳՂԻԱՑԻՈՑ

ՅԱՓՐԻԿԷ

(Տես էրես 180)

ԳԼՈՒԽ ԺԱ.

Ձանգիպար կը հասնին. — Անգղիական հիւպատր. — Բնակչաց յար դիտաւորութիւնները. — Քուսկենի կղզին. — Անձրեւոյնները. — Օղապարկին ուսեցուցումը. — Ապրիլի 18ին լուս. — Յետին ողջոյնը. — Վիկտորիան:

Շարունակաբար յաջող քամին Բիզոյիշիին ընթացքը արագեր էր դէպ ի դէմ եղեալ նպատակը: Մասնաւորապէս Մոզամպիկ ջրանցքին նաւարկութիւնը մեծաւ հանգստութեամբ կատարուեցաւ: Ծովային ուղևորութիւնը օղային ուղևորութեան յաջող գուշակութիւն մը կ'ընէր: Ամենքը հասնելու վայրկեանին կ'անձկային, և իւրաքանչիւր դժբերքսնի պատրաստութեանց վերջին ձեռք մը տալ կը փութար:

Վերջապէս նաւը Ձանգիպար քաղաքին առջին ներկայացաւ, որ նոյնանուն կղզւոյն վրայ շինուած է, և ապրիլի 15ին, առաւօտեան ժամը տասնութէկին, նաւահանգստին մէջ խարխիսը նետեց:

Ձանգիպար կղզին Մաշկադու իմամին կը վերաբերի, որ Գաղղիոյ և Անգղիոյ դաշնակից է, և ստուգիւ այս կղզին անոր ամենէն գեղեցիկ գաղթականութիւնն է: Նաւահանգիստը լի է միշտ մերձակայ երկիրներուն բազմաթիւ նաւերով:

Կղզին Ափրիկիոյ եզերքէն ջրանցքով մը բաժնուած է, որուն ամենէն մեծ լայնութիւնը երեսուն մղոնէն աւելի է¹:

1 Տասուերկուք ու կէս փարսախ:

Մեծ վաճառականութիւն ունի խէ-
ժի, փղոսկրի, և գլխաւորապէս « երե-
նոսի », որովհետեւ Զանգիպար մեծ վա-
ճառանոց է գերեաց: Հոն կը կեդրոնա-
նայ բոլոր այն աւարը՝ որ ներսի կողմե-
րուն ցեղապետաց անդադար մէկզմէ-
կու դէմ տուած պատերազմներէ ձեռք
կը բերուի: Սոյն այս վաճառականու-
թիւնը նաեւ բոլոր արեւելեան եզերքը
կ'ըլլուի, և մինչև Նեղոսին լայնութեանց
տակը: Պարոն Կ. Լըժան հոն տեղուանք
նոյն իսկ գաղղիական դրօշին տակ հան-
դիսատես եղած է՝ որ նոյն տեսակ
վաճառականութիւնը համարձակապէս
կ'ըլլուէր:

Բիզոյիշոյ հասածին պէս, անգղիա-
կան հիւպատը նաւը գալու աճապարեց
իր անձնանուէր տղքդորին իր ծառա-
յութիւնը մատուցանելու, որուն դիտա-
ւորութեանց արդէն ամսէ մը 'ի վեր Եւ-
րոպական լրագրաց միջոցաւ տեղեակ
էր: Սակայն մինչև այն ատեն անհա-
ւատ բազմութեանը հետևող մըն էր:

— Կը տարակուսէի, ըսաւ, ձեռքը
Սամուէլ Ֆէրկըսընի երկնցընելով, բայց
հիմա ալ չեմ երկարայիր:

Զտոգդոր, զՏիք Քէննըտի, և բնա-
կանապէս զբաշն ճոյ՝ իր տունը հրամ-
ցուց:

Անոր խնամքովը, տոգդոր շատ մը
նամակներ ձեռք ձգեց, զորոնք ինքը
Սքիք գնդապետէն ընդունած էր: Գըն-
դապետը և իր ընկերները Ուկուկոյ եւ-
կիրը հասնելէն առաջ, սաստիկ նեղու-
թիւն քաշեր էին անօթութենէ և գէշ
օգերէ. շատ դժուարութեամբ առաջ
կ'երթային և ալ յոյս չունէին շուտով
իրենց վրայօք տեղեկութիւն տալու:

— Ահա այս ամեն վտանգներէն և
զրկմունքներէն մենք ազատ պիտոր ըլ-
լանք, ըսաւ տոգդորը:

Երեք ճանապարհորդաց հանդերձան-
քը հիւպատին տունը փոխադրուեցան,
և սկսան գունտը Զանգիպարին ծովե-
զրը հանելու պատրաստութիւն տես-
նալ: Հոն նշանատու ցըցին քովը յար-
մար տեղ մը կար, ուր մեծ չէնք մըն
ալ կը գտնուէր, որ արեւելեան քամինե-

րուն դէմ անոր պաշտպանութիւն մը
կրնար ըլլալ: Այս մեծ աշտարակը, որ
խարսխին վրայ նստած տակառի մը
նմանութիւն ունէր, և որուն բաղդա-
տուելով Հայտէլպէրկի մեծ տակառը
պարզ պզտի տակառակ մը կ'ըլլար,
իր բերդ կը ծառայէր, և անոր տափա-
րակին վրայ նիզակազէն Պէլուշիներ
պահպանութիւն կ'ընէին, որ տեսակ
մը ծոյլ և շատախօս պահակապանք են:

Բայց երբ օդապարիկը նաւէն հանե-
լու վրայ էին, հիւպատին լուր եկաւ
որ կղզւոյն բնակիչք բռնութեամբ դէմ
դնել կ'ուզէին: Չկայ մեծագոյն կուրու-
թիւն քան զմոլեռանդութենէ գրգռեալ
կիրքերը: Քրիստոնէի մը հասնելուն
լուրը, որ օդու մէջ պիտոր բարձրա-
նար, մեծ յուզմունք մը պատճառեց.
սեւամորթները քան զԱրաբացիս աւելի
գրգռուելով, այս բանիս մէջ իրենց
կրօնքին դէմ չար դիտաւորութիւններ
զուշակեցին. մոքերնին դրած էին որ
արևուն և լուսին դէմ դաւաճանու-
թիւն մըն էր եղածը: Եւ որովհետև այս
երկու աստղերը Ափրիկեցի ժողովրդոց
առջին մեծ յարգութեան առարկայ են,
որոշեցին այս սրբապիղծ արշաւանքին
դէմ դնելու:

Հիւպատը այս լուրը առնելով, տոգ-
դոր Ֆէրկըսընի և Բէնէդ հրամանա-
տարին հետ խորհրդակցեցաւ: Այս
ետքինս սպառնալեաց առջին տեղիք
տալ չէր ուզեր, սակայն անոր բարե-
կամը ջանաց ու կրցաւ զինքը համոզե-
լու այս խնդրոյս վրայօք:

— Ապահովապէս որ կը յաղթենք,
ըսաւ անոր. նաեւ ստոյգ է որ իմամին
պահապաններն ալ մեզի թիկունք կ'ըլ-
լան ըստ պիտոյից. սակայն, սիրելի
հրամանատարս, ձախորդ դէպք մը դիւ-
րաւ կը հանդիպի. աղետալի հարուած
մը միայն բաւական է որ օդապարիկն
վրայ անդարմանելի վնաս մը հասցընէ.
և ճամբորդութիւնը այն ատեն դժուար
եղանելի վտանգի մը մէջ կ'իյնայ. պէտք
է ուրեմն դործերնիս մեծաւ զգուշու-
թեամբ տեսնենք:

— Ի՞նչ ընելու է ուրեմն: Թէ որ Ա-

փրկէի ափանցը վրայ ալ ելլենք, նոյն դժուարութեանց հանդիպինք պիտոր: Ի՞նչ ընելու ենք:

— Չկայ աւելի դիւրին բան, պատասխանեց հիւպատը: Տեսէք այն կղզիները՝ որ նաւահանգստէն անդին են. ձեր օդաւարիկը անոնցմէ մէկուն վրայ հանեցէք, խումբ մը նաւաստեաց ձեզի թիկունք առէք, և ալ վտանգէ մը վախ մ'ունենաք:

— Աքանչելի խորհուրդ, ըսաւ տղադորը, հանգիստ ալ կ'ըլլանք մեր պատրաստութիւնները լմնցնելու:

Հրամանատարը հաւանեցաւ այս խորհրդին, և հրամայեց որ Բիզօյիշդիլ ֆումպենի կղզւոյն մօտեցնեն: Ապրիլի 16ին առաւօտը, այն անտառախիտ կղզւոյն ծառազուրկ միջոցի մը մէջ օդաւարիկը ապահովուցին:

Երկու կայմ ութսուն ոտք բարձրութեամբ և նոյն չափ հեռաւորութեամբ մէկմէկէ բացակայ կանգնեցին. անոնց ծայրը հաստատուած ճախարակներու միջոցաւ՝ հաստ պարանով մը օդաւարիկը վեր բարձրացուցին, որ զեռ բոլորովին պարապ էր: Ներքին գունտը արտաքին զնտին վերի ծայրը հաստատուած ըլլալով՝ անոր հետ մէկ տեղ վեր կը քաշուէր:

Ջրածինը մտցնող երկու խողովակները իւրաքանչիւր զնտին ստորին յաւելուածին վրայ հաստատեցին:

Ամսուն 17դ օրը կազը շինող կազմարանը պատրաստելու անցուցին: Ասիկայ երեսուն տակառներէ կը բաղկանար, որոնց մէջ երկաթի կտորներու և ծծմբային թթուութի միջոցաւ՝ ջուրը կը տարրալուծուէր: Ջրածինը՝ ճամբան զտուելով՝ կեդրոնը գտնուած մեծ տակառի մը մէջ կը լեցուէր, և անկէ մտցնող խողովակաց միջէն՝ իւրաքանչիւր զնտին մէջ կ'անցնէր: Այս կերպով զնտից իւրաքանչիւրը ճշգիւ որոշեալ կազի քանակով մը կը լեցուէր:

Այս գործողութեան համար հարկ եղաւ հազար ութ հարիւր վաթսուն և վեց կալլոնաչափ¹ ծծմբային թթուութեամբ, տասնուվեց հազար յիսուն լիտր երկաթ², և ինն հազար հարիւր վաթսուն և վեց կալլոնաչափ ջուր³:

Այս գործողութիւնը յաջող գիշերը սկսան ի գործ դնել, առաւօտեան ժամը երեքին, և ութ ժամու չափ տեւեց: Երկրորդ օրը, օդաւարիկը իր ցանցահիւսովը պատած, նաւակին վրայէն վայելչակերպ կը ճօճէր, մինչդեռ շատ մը հողով լեցուն պարկեր զինքը գետինը հաստատուն կը բռնէին: Բնդարձակեցուցիչ կազմարանը խնամքով տեղը զետեղելէն ետքը օդաւարիկին հաղորդուած խողովակներն ալ գլանաւոր արկղին վրայ յարմարեցին:

Խարիսխները, չուանները, գործինները, ճամբորդութեան ծածկոյթները, վրանը, կերակրելիւնաց պաշարը, զէնքերը, բոլորը՝ նաւակին մէջ իրենց որոշուած տեղը դրուեցան. իսկ ջրոյ պաշարը Զանգիպարէն առին: Երկու հարիւր լիդր նաւախիճը յիսուն պարկի մէջ լեցունելով, նաւակին մէջ ձեռքի տակ տեղ մը զետեղեցին:

Բոլոր այս պատրաստութիւնները երեկոյեան ժամը հինգին ատենները լմնեցան: Բոլոր այս ատենս կղզւոյն չորս դին պահապանները անդադար կը հրակէին, մինչդեռ Բիզօյիշդիլ նաւակները ջրանցքին մէջ վեր վար կը քալէին:

Սեւամորթը՝ աղաղակներով և այլանդակ ձևերով ու շարժումներով իրենց կիրքը յայտնելու չէին դադրեր: Կախարդները, այն կատաղած մարդիկնէրուն խումբերը, քալելով՝ զանոնք ալ աւելի կը զրգռէին, մինչև մոլեռանդներէն ոմանք փորձ փորձեցին նաև լողալով կղզին ելլել, այլ դիւրաւ զիրենք հաւացուցին անկէ:

Այն ատեն կախարդութեանց և դիւթութեանց արարողութիւնները սկսան տեսնուիլ: Անձրեւողները, որ ամպոց իշխել կը կարծեն, փոթորիկները և « քաւանց տեղատարաւքը » իրենց օգնու-

1 Ութ տակառ երկաթէ աւելի:

2 Փառսունուսէ կ հազար երկու հարիւր յիսուն լիդրի մօտ:

3 Այսպէս կը կոչեն սեւամորթը զխարկուտը:

1 Երեք հազար երկու հարիւր յիսուն լիդր:

թեան կանչեցին. այս բանիս համար երկրին ամեն տեսակ ծառերէն տերևներ ժողվելով, մաղմաղ կրակի վրայ եփեցին, և մի և նոյն ժամանակ երկայն ասեղ մը ոչխարի մը սիրտը խոթելով սպաննեցին: Սակայն հանդերձ բոլոր իրենց այս արարողութիւններովը, երկինքը պարզ մնաց, իրենց թողլով ոչ խարը և այլանդակ ձեւերը:

Սկերը այս բանիս վրայ իրենք զիրենք սաստիկ զեղխութեանց սկսան տալ դէմադրով գինովաւելով, որ քոքոյի ծառէն հանուած այրող ըմպելիք մըն է, և կամ սաստիկ գինովցընող դարեջրով մը, որ դոկիւս կը կոչուի: Իրենց երգերը, որ թէպէտ յայտնի ներդաշնակութիւն մը չունին, այլ չափը շատ ճիշտ է, մինչև խոր գիշերը քշեցին:

Երեկոյեան ժամը վեցին ճանապարհորդք վերջի անգամ հրամանատարին և անոր սպայից սեղանակից ըլլալու ժողովեցան: Քէննըտի, որուն ալ ոչ ոք բան կը հարցընէր, քթին տակէն անխմանալի խօսքեր կը մոմուար, և աչքը տղրդորին վրայէն չէր վերցընէր:

Սակայն այս կերակուրը տխուր եղաւ: Որչափ յետին ժամանակը կը մօտենար՝ այնչափ ալ ամենուն սիրտը վշտալից մտածութիւններով կը պաշարէր: Ի՞նչ արդեօք պատրաստեր էր ճակատագիրը այս յանդուգն ճանապարհորդաց: Միթէ մէկ մըն ալ իրենց տունը, իրենց բարեկամաց մէջ գտնուէին պիտի: Եթէ տեղափոխութեան միջոցները պակսէին, ի՞նչ ըլլային պիտի այն վայրագ ժողովրդոց մէջ, այն անծանօթ աշխարհաց և անհուն անապատից մէջ:

Այս մտածութիւններս, որ մինչև այն ատեն թէպէտ մտքերնին կու գային՝ այլ ամենին ուշ զնեւ չէին ուզեր, այս ատենս սկսան իրենց յուզուած երևակայութիւնը պաշարել: Տղրդոր ֆէրկըսըն, միշտ անայլայլակ, ասդիս անդին բաներու վրայ կը խօսէր: Սակայն անօգուտ տեղ կը ջանար այն գիւրահաղորդ տխրութիւնը փարատելու. չիկրցաւ յաջողիլ:

Որովհետև տղրդորին և իր ընկերաց անձին դէմ վախ կար, իրենք ալ նոյն գիշերը նաւը պառկեցան, և առաւօտեան ժամը վեցին իրենց խցիկը թողլով, ֆումպէնի կղզին գնացին:

Օդապարիկը արևելեան հովուն շընչովը թեթեւ մը կը ճօճէր: Այն հողով լեցուն պարկերը մէկդի առնելով, որ զօդապարիկը գետինը հաստատուն կը բռնէին, քսան նաւաստիք փոխանակեցին անոնց: Բէննէդ հրամանատարը և իր սպայները այս հանդիսաւոր ուղեւորութեանը ներկայ էին:

Այս ատենս քէննըտին շիտակ տղրդորին երթալով, անոր ձեռքը բռնեց և ըսաւ.

— Հաստատուն որոշած ես ուրեմն, Սամուէլ, որ ճամբայ ելլես:

— Այդ ամենահաստատուն է, սիրեցեալդ Տիք:

— Ինչ որ ձեռքէս կու գար ընելու որ այդ ճանապարհորդութիւնը արգելում՝ ըրի:

— Այո, բոլորը ըրի:

— Ուրեմն այդու նկատմամբ խիղճս հանդարտ է, ու քեզի կ'ընկերանամ:

— Վստահ էի, պատասխանեց տղրդորը, երեսին վրայ արագ զգացում մը երեցընելով:

Յետին ողջունից ժամանակը կը մօտենար: Հրամանատարը և իր սպայները զգածուած՝ իրենց արիասիրտ բարեկամները համբուրեցին, առանց մոռնալու զբաժն ճոյի իսկ, որ վսեմ և զուարթ կերպարանք կը ցուցընէր: Հանդիսակիցը ամենը կը փութային տղրդորին ձեռքը սեղմելու:

Ժամը իննին՝ երեք ճանապարհորդակից ընկերը նաւակին մէջ իրենց տեղը անցան. տղրդորը իր բոցարծարծը վառեց և իր բոցը անանկ յարմարցուց որ արագ ջերմութիւն մը առթէ: Օդապարիկն՝ որ ցայն վայր գետնի վրայ բոլորովին հաւասարակշիռ կը մնար, քանի մը վայրկեան ետքը սկսաւ վեր ելլել, և հարկ եղաւ որ նաւաստիք զայն բռնող չուանները քիչ մը արձրկեն:

այնպէս նաւակը քսան ոտքի չափ բարձրացաւ :

— Բարեկամք, կանչեց տղադուրը զըլ-խիբաց՝ իր երկու ընկերաց մէջ տեղ կանգուն կենալով, մեր օղային նաւուն բարեբաղդութիւն բերող անուն մը դընենք. թող վիկտորիա կոչուի :

Ջարհուրելի հուռուա մըն էր լցուեցաւ :

— Կեցցէ թագուհին. Կեցցէ Անգղիա :

Այս ատենս օդապարկին վերելական ուժը սաստիկ կերպով կ'աճէր : Ֆէրկըսըն, Քէննըտի և ճոյ յետին ողջոյն մը տուին իրենց բարեկամաց :

— Արձրկեցէք բոլորը, կանչեց տղադուրը :

Եւ վիկտորիան արագաբար օդուն մէջ բարձրացաւ, մինչդեռ Ռիզօլիշիին չորս թնդանօթները որոտաձայն կը հնչէին :

Կը շարունակուի :

ՄԱՀ ԿԵՍԱՐՈՒ

Ո Ղ Բ Ե Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

(Տես երես 189)

ՀԱՆԴԷՍ Դ

Խորհրդարան կամ տաճար խորհրդոց

ՏԵՍԱՐԱՆ Ա

ԲՐՈՒՏՈՍ, ԿԱՍՍԻՈՍ

ԿԱՍ. Ինձ թուի եթէ սակաւաւոր եղիցի մեզ այսօր այս ատենս :

ԲՐ. Շատ է՝ եթէ քաջաց իցէ : (Լէի աղաղկ) :

ԿԱՍ. Լսես, Բրուտէ, զաղաղակ ժողովրդեանն :

ԲՐ. Եւ նոքա կարող են ձեռն տալ մեզ այսօր : Մօտալուտ 'ի վերայ կայ վտանգն :

ԿԱՍ. Սակայն ես կարի իմն աներկիւղ և անխուժ տեսանեմ զքեզ :

ԲՐ. Պոմպէոս և Կատոլին ինձ հովանացին :

ԿԱՍ. Ահաւասիկ երեւցան պաշտօնեայք բռնաւորին :

ԲՐ. Իսկ Կիմբրոս և Դեկիմոս... :

ԿԱՍ. Ընդ նմա իսկ են. բարւոք և խորագիտու թեամբ գործեցին զայդ :

ԲՐ. Եթէ խորհեցար արդեօք հեռացուցանել աստի զանօրէնն Անտոնիոս :

ԿԱՍ. Իմ բան եղեալ է ընդ Մարկեղոսի և Մե.

տեղոսի, զի յերկարագոյն նուազ կալցեն զնա արտաքոյ տաճարիս, եթէ և պէտք ինչ իցեն՝ նաեւ բռնի ևս :

ԲՐ. Ապա ամենայն ինչ կազմ է. կալցուք մեք զերաբանչիւր տեղի. (Նափի). վայրիկ մի ևս գիրկս ածցուք ազատութեան և միմեանց կամ կենօք և կամ մահուամբ. տեսցես ընդ հուպ, Կասսիէ, զյետին հնարս որդւոյ, և զհանդէս վերջին առն հռովմայեցւոյ :

ԿԱՍ. Ահ, քաջ, ակնարկութեան քում սպասեն ամենայն սուսերք :

ՏԵՍԱՐԱՆ Բ

ԿԵՍԱՐ ԱՅԱՏԱՆՈՐԺ, ՈՐ ԱՊԵՐ ԱԷԻԻՆ.

ԿԻՄԲՐՈՍ, ԴԵԿԻՄՈՍ և այլք 'ի սինդիկատաց :

և ամենայնիս յառնէն, մինչ Բաւլէոյի ԿԵՍԱՐ :

ԿԵՍ. Իսկ զիմօրդ, զի՞նչ իրք իցեն, զի կարգեալ ժամն վաղու ևս անցեալ է, և կէս ծերակուտին հաղիւ երևի... (Նափ) : Սակայն և ես անագանցի քան զարժանն. ցաւ է ինձ, ո՞ պատկառելի ատենն, զի ապաժաման գտեալ ետու ձեզ սպասել : Սակայն առ ի՞նչ արդեօք մեծ կէս մասն ձեր ոչ է 'ի միջի :

(Լուռիւն)

ԲՐ. Չտայ՝ ոք պատասխանի... ամենեցուն մեզ մերկապարանոց կայ պատճառն. ոչ իսկ և լուռ թիւն մեր գուշակէ քեզ զայդ, Կեսար : Սակայն եթէ լսել կամիցիս, զորս միանգամ աստ առ քեզ տեսանես՝ յերկիւղէ գումարեցան. և զորս ոչ տեսանես՝ յերկիւղէ ցրուեցան :

ԿԵՍ. Ոչ նոր ինչ է ինձ յանդգնութիւն Բրուտոսի, որպէս և ոչ քեզ մարդասէր ներողութիւն Կեսարու : Սակայն զուր մըցիս, զի ոչ եկի ես այսր մտանել ընդ քեզ 'ի պայքար... :

ԲՐ. Եւ ոչ 'ի զուր մեք յայպանել զքեզ. ոչ իմաստուն գործեցին՝ որ միանգամ 'ի բարենշան աւուրս ուժացան 'ի մէնջ, և վերիակ գործեն՝ որ յատենի աստ համրացեալ նստին. ես արդ լուծից զնոցա տարապարտ երկիւղն : Օ՛ն անգր եթէ Կեսար չարիս նիւթեցէ 'ի սրտի իւրում. 'ի վերայ հայրենեացս, զգթութիւն իւր՝ զոր ինձ արդ 'ի դէմս ածէր՝ թէպէտ և ոչ ինչ արժան իցէ այսուհետեւ ցուցանել առ իս, նա առ տաւապեալ հայրենիս մեր դարձուցանէ : Կենդանի են անձինք մեր, եթէ ոչ նոր իմն յաղթանակ շքեղ քան զառաջինսն՝ կանգնեցէ նա այսօր. զի եկն այսր յաղթանակել անձին իւրում և նախանձու յաջողկոտացն. օն և օն արասցեն ինձ դիքն, եթէ ոչ 'ի սոյն իսկ գումարեաց նա զձեզ, զի ընտրեաց նա իւրոց քաղաքակցացն հաւասարել կամակար սրտի մտօք. սակայն և այնպէս ոչ ուրեք գտցի զուգական Կեսարու... :

ԿԵՍ. Կամէի ընդմիջել զբան քո... :

ԲՐ. Մի ծանր ինչ թուեցի քեզ իմն. այն ինչ կարգեալ իմ պրետոր՝ իշխեմ զառաջս առնուլ բանից գիկտատորին. Բրուտոս այժմ մի անձն է ընդ Կեսարու. տեսանեմ զձեզ զարմացեալս, մնայլ թուին յաչս ձեր բանք իմ. արդ բանիւ լոկով լուսաւոր արարից. որդի եմ ևս Կեսարու :